ՀՈՒՇԱԳԻՐ
ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՇՊԱԿ-ՆԵՐԻ ՑԱՆՑԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազությունը (այսուհետ՝ Դատախազություն) և Հայաստանում գործող Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների և ընդունարանների ցանցը, որոնք գործարկվում են Արմավիրի Զարգացման կենտրոնի (գործարկում է Արմավիրի ՇՊԱԿ-ը), Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատի (գործարկում է Գեղարքունիքի ՇՊԱԿ-ը), «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության (գործարկում է Երևանի, Վանաձորի, Կապանի, Հրազդանի և Աշտարակի ՇՊԱԿ-ները, Արարատի, Թալինի, Ապարանի, Գյումրու, Իջևանի, Եղեգնաձորի ՇՊԱԿ-ները) կողմից (այսուհետ՝ ՇՊԱԿ-ների ցանց), (այսուհետ՝ Կողմեր),

նկատի ունենալով ՀՀ գլխավոր դատախազի կողմից դատախազության ղեկավարումը, դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացման քաղաքականության սահմանումը և դրա իրականացման նկատմամբ վերահսկողությունը,

հաշվի առնելով, որ կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ոչ միայն վերջիններիս կարողություններով, այլ նաև իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության կառույցների միջև, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիների հետ ակտիվ համագործակցությամբ,

կարևորելով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև հանրային ծառայություններ մատուցող կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, կառավարման ու հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացման մեթոդական ու մեթոդաբանական օժանդակության հրատապությունը,

անհրաժեշտ համարելով արդարադատության իրականացման, կառավարման և հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավումը,

ձգտելով հնարավորին չափ նպաստել քաղաքացիների շահերի և իրավունքների ոտնահարման կանխարգելմանն ու որոշումների կայացմանը նրանց անմիջական մասնակցության ապահովմանը,

առաջնորդվելով օրենքի գերակայության և բարոյական վարքագծի հավասարակշռությամբ, առաջնայնություն տալով պաշտոնատար անձի և հանրային ծառայողի բարոյական վարքականոնի մշակմանը և ներդրմանը,

գնահատելով ՇՊԱԿ-ների ցանցի դերը որպես կոռուպցիայի հաղթահարման ոլորտում տեղեկատվության ձեռքբերման, տիրապետման, տրամադրման, փոխանակման և հրապարակման, ինչպես նաև կոռուպցիայից տուժած քաղաքացիների շահերի ներկայացման և պաշտպանության լրացուցիչ միջոց,

ընդգծելով պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների հարաբերությունները կարգավորող արդեն ընդունված և ընդունվելիք նորմատիվ ակտերի վերաբերյալ կայացվող որոշումները հրապարակային և թափանցիկ դարձնելու, տեղում լուսաբանելու, ճիշտ ըմբռնելու ու կյանքի կոչելու գերակայությունը,

ցանկանալով ամրապնդել և զարգացնել համագործակցությունը կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտում,

համաձայնվեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1
Հուշագրի նպատակները

Կողմերի համագործակցությունը իրականացվում է հետևյալ նպատակներով.

նպաստել Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը,

աջակցել Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը,

բարձրացնել բնակչության կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտության և այդ պայքարի միջոցների վերաբերյալ իրազեկության մակարդակը,

նպաստել կոռուպցիայի դեմ պայքարում ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերի և իրավունքների պաշտպանությանը,

նպաստել կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենսդրության ընթացակարգային և համակարգային փոփոխությունների կատարմանը:

ՀՈԴՎԱԾ 2
Համագործակցելու ընդհանուր պարտավորությունը

Կողմերը համագործակցություն են իրականացնում ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն Հուշագրի դրույթների հիման վրա՝ գործելով իրենց իրավասության շրջանակներում և առաջնորդվելով հրապարակայնության, օրինականության և ինքնուրույնության սկզբունքներով:

ՀՈԴՎԱԾ 3
Համագործակցության հիմնական ուղղությունները

Կողմերը համաձայնվում են համագործակցել ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորված ծրագրի, ինչպես նաև Հայաստանում գործող ՇՊԱԿ-ների ցանցի կողմից հետագայում իրականացվելիք համանման հակակոռուպցիոն այլ ծրագրերի շրջանակներում հետևյալ ուղղություններով.

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ապահովում,

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացում,

կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտության և այդ պայքարի միջոցների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացում բնակչության շրջանում,

կոռուպցիայի դեմ պայքարում ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերի և իրավունքների պաշտպանության ապահովում,

կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման ընթացքում դրանց կանխմանն ուղղված աջակցության ցուցաբերում, այդ թվում՝ հնարավորության դեպքում անհրաժեշտ նյութերի տրամադրման միջոցով,

կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենսդրության համապատասխան բարեփոխումների առաջարկությունների ներկայացում.

ՇՊԱԿ-ների իրավախորհրդատուների մասնագիտական որակավորման բարձրացում:

ՀՈԴՎԱԾ 4
Համագործակցության ձևերը

Սույն Հուշագրի դրույթների կատարման նպատակով, Կողմերի համագործակցությունն իրականացվում է հետևյալ ձևերով.

համատեղ աշխատանքային քննարկումների կազմակերպում Կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմում-բողոքներին ընթացք տալու և դրանք բավարարելու օրենքով նախատեսված ընթացակարգերը ճշգրտելու օրակարգերով,

Կողմերից մեկի առաջարկության դեպքում փոխադարձ համաձայնությամբ ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա հանձնարարությամբ այլ դատախազի մոտ խորհրդակցության անցկացում՝ ԾՊԱԿ-ի և դատախազության համատեղ գործունեության ընթացակարգերը ճշտելու համար,

կոռուպցիոն նորմեր պարունակող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի թերությունների և բացերի, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործունեության տեսակների բացահայտում՝ անձանց կողմից ներկայացված դիմում բողոքների վերլուծության կամ իր իրավասության սահմաններում իրականացված անմիջական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա, ինչպես նաև դրանք քննարկելու նպատակով համատեղ սեմինարների, քննարկումների կազմակերպում և անցկացում.

համատեղ աշխատանքային հանդիպումների և խորհրդատվությունների անցկացում՝ սույն Հուշագրի հիման վրա համագործակցության արդյունավետության բարձրացման և ամրապնդման հարցերի քննարկման նպատակով:

Դատախազությունը իր իրավասության շրջանակներում ընթացք է տալիս ԾՊԱԿ-ների կողմից դատախազությանը հասցեագրած կոռուպցիոն ռիսկեր պարունակող քաղաքացիների բողոքներին, աջակցի ԾՊԱԿ-ների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող այն տեղեկատվության ամբողջացմանը, որն անմիջականորեն կապված է անձանց բողոքներին առնչվող և օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով, կանոնակարգերով կամ ներքին փաստաթղթերով պայմանավորված ընթացակարգերի հետ,

ԾՊԱԿ-ները ֆիզիկական և իրավաբանական անձանց հնարավորություն պետք է ընձեռեն՝ արձանագրելու իրենց հանդիպած կոռուպցիոն դեպքերը և բողոքներ ներկայացնելու Դատախազություն, *պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին,* դատական մարմիններ, անվճար իրավաբանական աջակցության տրամադրեն ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ վերջիններիս դիմումների ընթացքին օժանդակելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 5
Համագործակցության այլ ձևերը

Կողմերը համաձայնվում են, որ սույն Հուշագիրը չի բացառում համագործակցության այլ ձևերի հնարավորությունը, որոնք նշված չեն Հուշագրում, բայց համապատասխանում են նրա նպատակներին:

ՀՈԴՎԱԾ 6
Համագործակցության զարգացումը

Սույն Հուշագիրը կողմերին չի խոչընդոտում սահմանելու և զարգացնելու համագործակցության փոխադարձորեն ընդունելի այլ ուղղություններ և ձևեր՝ պահպանելով սույն Հուշագրի 2-րդ հոդվածով նախատեսված պայմանները:

ՀՈԴՎԱԾ 7
Համագործակցության համակարգումը

Սույն Հուշագրով սահմանված համագործակցությունը համակարգում և վերահսկում են Կողմերի ղեկավար մարմինները՝ լիազորված անձանց միջոցով:

ՀՈԴՎԱԾ 8

Փոփոխություններ և լրացումներ

Սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

ՀՈԴՎԱԾ 9

Տարաձայնությունների կարգավորում

Տարաձայնությունները, որոնք կարող են առաջանալ սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման կապակցությամբ, լուծվում են խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 10

Եզրափակիչ դրույթներ

Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Սույն Հուշագրի գործողությունը կդադարեցվի Կողմերից որևէ մեկի՝ Հուշագրի գործողությունը դադարեցնելու իր որոշման մասին մյուսին գրավոր ծանուցելուց երեք ամիս հետո:

Սույն Հուշագիրը ստորագրվել է Երևան քաղաքում 2011 թվականի հուլիսի 19-ին, կազմված է 4 էջի վրա, հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից:

Դատախազության կողմից

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ
Արմեն Դանիելյան

ՇՊԱԿ-ների ցանցի կողմից

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ
Կարեն Զաղոյան